«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ
ԱՌԱՐԿԱ	ՄԱՅՐԵՆԻ
ՀԵՂԻՆԱԿ	ՆԱԻՐԱ ԳԱԼՍՏՅԱՆ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՄԱՐԱԼԻԿԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... **3**

Խոսքի մասերի ուսուցման բովանդակությունը տարրական դասարաններում.....**5**

Գոյական անվան ուսուցումը տարրական դասարաններում.....9

Բայի ուսուցումը տարրական դասարաններում.....13

Ածականի ուսուցումը տարրական դասարաններում.....16

Թվականի ուսուցումը տարրական դասարաններում.....18

Եզրակացություն.....**21**

Գրականության ցանկ.....**23**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ուսուցումը ոչ միայն գիտելիքների ձեռքբերման գործընթաց է, այլև առաջընթացին ակտիվորեն մասնակցող անձի զարգացման և դաստիարակության միջոց:

Ժամանակակից գիտության բազմազան ոլորտների, մշակութային կյանքի, ազգամիջյան, հասարակական-քաղաքական հարաբերությունների տարաբնույթ զարգացումներն ազդում են լեզվական համակարգի կատարելագործման գործընթացի վրա, թելադրում նրա բառային կազմի հարստացման անհրաժեշտությունը: Այս հարցում կարևորվում է խոսքի մասերի ուսուցման դերը, որովհետև խոսքի մասերով են բնորոշվում իրերը, առարկաները, երևույթներն ու գործողությունները:

Անառարկելի է, որ պատկերավոր, դիպուկ, ճկուն ու դրական հույզերով օժտված հարուստ խոսքը մարդուն օգնում է կառուցողական հարաբերություններ ստեղծել թե՛ յուրայինների և թե՛ օտարների հետ, լուծել բազմաթիվ հիմնախնդիրներ, պաշտպանել իր և իր միջավայրի շահերը, հիմնավորել սեփական դիրքորոշումները:

Այս հայտարարությունների շրջանակով էլ պայմանավորված է հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը:

Հետազոտության օբյեկտը տարրական դասարանի աշակերտների կողմից խոսքի մասերի ըմբռնման, բազմաբնույթ մտածողության ձևավորման, բառապաշարի հարստացման գործում ունեցած նրանց դերի գիտակցման, իմաստավորման և գնահատման համակարգն է:

Հետազոտության առարկան խոսքի մասերի ուսուցման գործընթացն է տարրական դպրոցում:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նյութ դարձնելով խոսքի մասերի իմաստաքերականական հատկանիշների ուսումնասիրումը կրտսեր դպրոցում՝ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կիրառման ճանապարհով մշակել թեմայի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական ամբողջական համակարգ, որի

կիրառումը կնպաստի խոսքի մասերի գործնական յուրացմանը, նյութի գիտակցական, առավել տրամաբանված ըմբռնմանը, սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների մշակմանը:

Հետազոտության խնդիրներն են.

1. բացահայտել խոսքի մասերի տեղն ու դերը կրտսեր դպրոցում,
2. փորձարկել և դասակարգել խոսքի մասերի ուսուցման այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք կնպաստեն խոսքի մասերի յուրացմանը, սովորողների բառապաշարի հարստացմանը, բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը,
3. մշակել թեմայի յուրացման արդյունավետությանը նպաստող վարժությունների համակարգ,

Հետազոտության մեթոդներից օգտվել ենք և՛ տեսական-հետազոտական, և՛ գործնական-հետազոտական, և՛ արդյունքների ներկայացման մեթոդներից, մասնավորապես՝ առաջինի շրջանակներում կատարել ենք առանձին տեսությունների ընտրություն, ուսումնասիրում, համադրում և համակարգում՝ ըստ մեր կողմից քննվող նյութի հետ ունեցած առնչակցության, երկրորդի շրջանակներում կատարել ենք դասագրքային նյութի մեկնություն, իսկ երրորդի մեթոդացանկից կիրառել ենք ամփոփ շարադրանքի մեթոդը՝ դրանով ներկայացնելով մեր աշխատանքի քննության արդյունքում կատարած եզրակացությունները:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Խոսքի մասերի ուսուցումը տարրական դասարաններում առնչվում է բառակազմությանը, որից ելնելով էլ մայրենիի առարկայական չափորոշչի բովանդակային պարտադիր միջուկը խոսքակազմության մեջ կարևորելով խոսքի մասերի տարբերակումը՝ առաջարկում է տարբերակել ածանցները՝ ըստ խոսքի մաս կերտելու ունակության՝ գոյականակերտ, ածականակերտ և բայակերտ:

Խոսքի մասերի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները ներկայացնելիս օգտվել եմ Վ. Սարգսյան, Կ Թորոսյան «Մայրենի» աշխատանքային գիրք-տետրերից, ինչպես նաև զուգահեռաբար կիրառվող ուսումնական ձեռնարկներից, հանրակրթական դպրոցի դասագրքերից:

Ուսուցման առաջին աստիճանում՝ քերականական նախագիտելիքների հաղորդման ժամանակ, խոսքի մասերն անվանվում են աշակերտներին հասկանալի բնութագրող բառերով, ինչպես՝ «առարկա», «գործողություն», «հատկանիշ ցույց տվող բառեր», իսկ երկրորդ աստիճանում խոսքի մասերն անվանվում են քերականության մեջ ընդունված բառերով՝ գոյական, ածական, բայ և այլն: Սրանց քերականական ձևափոխությունների և ընդհանուր իմաստների ու միմյանց նկատմամբ ունեցած փոխհարաբերությունների մասին գիտելիքներն ուսուցանվում են տարրական դասարանների «Ձևաբանություն» բաժնում, հետևյալ բաշխմամբ.

- բառերի փոփոխությունը խոսքի մեջ,
- հիմքը և վերջավորությունը,
- քերականական իմաստը և քերականական ձևը : [6, էջ 11]

Տարրական դասարաններում խոսքի մասերն անվանվում են երրորդ դասարանից՝ իբրև լեզվական տարրական գիտելիքներ: [7, էջ 28, 37].

Խոսքի մասերի ուսուցումը ձևաբանական գիտելիքների ուսուցումն է, որի յուրացման համար պահանջվում է.

- տվյալ կարգին պատկանող բառերի ընդհանուր նշանակության գիտակցում՝ կապված դրանց ձևական հատկանիշների հետ,
- տվյալ խոսքի մասի քերականական հատկանիշների համակարգի վրա հենվելու կարողություն:

Ըստ կրթական չափորոշչի՝ երրորդ դասարանից ուսումնասիրվում և անվանվում են գոյականը, ածականը, բայը և թվականը: Սրանց զուգահեռ ընդհանուր տեղեկություններ են հաղորդվում նաև դերանունների, շաղկապների և ձայնարկությունների մասին: Տարրական դասարաննորում ձևաբանական գիտելիքների ուսուցումը կատարվում է եռաստիճան համակարգով:

1. Աշակերտները խոսք են կազմում, իրենց մտքերն ու զգացմունքներն արտահայտում են նախադասությունների միջոցով:
2. Նախադասություններից առանձնացվում են բառերը, կատարվում են հարցադրումներ, որոշում՝ թե բացի բուն բառիմաստից ինչ են արտահայտում բառերը՝ առարկա, գործողություն, թե առարկայի հատկանիշ:
3. Ընդհանրացնում են առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերը՝ դրանք անվանում խոսքի մասեր և դասակարգում համապատասխան խմբերում:

Կարևոր է այն հանգամանքը, որ քերականական գիտելիքների ուսուցումն ունի ոչ միայն լեզվական օրինաչափությունների ուսուցման ու գիտակցման բնույթ, այլ նաև աշակերտների բառապաշարի զարգացման, նախադասության մեջ բառերի ճիշտ կապակցման և ուղղագրական կարողությունների յուրացման:

Տարրական դասարաններում խոսքի մասերի ուսուցումը կազմակերպվում է «գոյական > բայ > ածական > թվական» հաջորդականությամբ, որն անընդհատ ուսուցանվում է զուգադրման եղանակով: Ինչպես՝ գոյական անունների տարբերակումից հետո աշակերտներին հանձնարարվում է առարկա ցույց տվող բառերից ածանցման միջոցով կերտել գործողություն ցույց տվող բառեր՝ բայեր, հատկանիշ ցույց տվող բառեր՝ ածականներ: Այնուհետև հանձնարարվում է կազմել բառակապակցություններ՝ զուգադրելով գոյականներն ու բայերը, գոյականներն ու ածականները և այլն:

«Գոյական + բայ» կապակցության քերականական արտահայտության ուսուցումն ունի նախադասություն կազմելու կարողությունների գիտակցական զարգացման նպատակ, քանի որ յուրաքանչյուր նախադասության հիմքում ընկած են ենթական և ստորոգյալը, որոնց արտահայտման հիմնական միջոցներն են գոյականը և բայը: Հենց այդ նպատակով էլ տարրական դասարաններում առաջադրվում է այս երկու խոսքի մասերի համաժամանակյա ուսուցումը.

«....բայը գոյականից հետո դնելը ուսուցողական մեծ հնարավորություններ է ստեղծում ոչ միայն ձևաբանական նյութի հեշտ ընկալման, այլև կապակցված խոսքի ուսուցման համար»:[12 , էջ 354]

Խոսքի մասերի տարբերակման հիմքում ընկած է ճիշտ հարցադրման ռազմավարությունը, որի հետևանքում աշակերտները առանձնացնում են նույն հարցին պատասխանող բառերը, որոնց հատուկ է նույն քերականական վերջավորություններով հանդես գալը: Ինչպես՝ «ի՞նչ» հարցին պատասխանող գոյականները հեշտությամբ կարողանում են պատասխանել «ինչե՞ր» հարցին՝ արտահայտելով բազմակիության իմաստ, և հակառակը: «Ի՞նչ է անում» հարցադրմանը պատասխանող բառերը հեշտությամբ փոխակերպվում են «ի՞նչ արեց», «ի՞նչ է լինելու» հարցերին՝ արտահայտելով տարբեր ժամանակներում կատարվող գործողության իմաստ և այլն:

Խոսքի մասերի ուսուցումը տարրական դասարաններում անպայմանորեն կատարվում է բնագրի ընթերցանության շրջանակներում: Ընթերցված և բովանդակությունը բացահայտված բնագրից աշակերտները հեշտությամբ են դուրս գրում առարկա, գործողություն կամ հատկանիշ ցույց տվող բառերը, կազմում դրանց զուգահեռ քերականական ձևերը, դրանք կիրառում բառակապակցությունների, ինչպես նաև նոր նախադասությունների մեջ: Ինչպես՝ Գ. Մանուկյանի հեղինակած «Տերևը» ստեղծագործության ընթերցանությունից հետո հանձնարարվում է տրված ածականների կողքին գրել համապատասխան գոյականները: Աշխատանքի արդյունքում աշակերտները ստանում են *գեղեցիկ աղջիկ, արևոտ օր, բարի մարդ, սառը պաղպաղակ, կամակոր տղա, համառ երեխա* և այլ բառակապակցություններ, որոնք բոլորն էլ բխում են պատմվածքի ընդհանուր շարադրանքից: [10, էջ 4-6]

Խոսքի մասերի ուսուցումը տարրական դասարաններում միատարր չի կազմակերպվում, և սրանք ուսուցանվում են նաև այլ լեզվական իրողություններին զուգահեռ:

Խոսքի մասերը զուգադրվում են բառերի ձևաիմաստային խմբերին և առաջարկվում է ներկայացնել ընտրված բառերի հոմանիշներն ու հականիշները, որոնք անվանվում են «ընկեր» և «հակառակորդ» բառերով;

1. Բնականաբար այս առաջադրանքի հիմքում ընկնում է այն գաղափարը, որ նույն կամ հակառակ իմաստ ունեցող զույգերը միևնույն խոսքի մասին են պատկանում: Ինչպես՝ Ալեն Ալեքսանդր Միլնի հեղինակած «Վինի Թուխը և հայտնի չէ թե ով» հեքիաթի ընթերցանությունից հետո հանձնարարվում է բնագրից դուրս գրել ածականները և գրել դրանց հականիշները: [11 , էջ 133-135]
2. Խոսքի մասերի ուսուցման կարևոր մեթոդներից է նկարների անվանումը և ներկայացումը: Հաճախ են աշակերտներին հանձնարարվում անվանել նկարում պատկերված իրողության «ի՞նչ», «ի՞նչ անել» և «ինչպիսի՞», «ինչքա՞ն» հարցերին պատասխանող բառերը: Այսպիսով քերականությունը կոչվում է «պատկերազարդ», քանի որ աշակերտները իրենց իմացած լեզվական իրողությունները որոնում են նաև նկարներում կամ դրանք արտահայտում են նկարներով, ձեռագործ աշխատանքներով կամ շրջապատող աշխարհի յուրաքանչյուր երևույթ՝ բացահայտելով միմյանց կապակցվող բառերի միջև եղած տրամաբանական կապերը:
3. Խոսքի մասերի ուսուցումը կազմակերպվում է նաև նկարագրության եղանակով, հանձնարարվում է նկարագրել կենդանիներ, մարդկանց կամ շրջապատող աշխարահի յուրաքանչյուր երևույթ՝ բացահայտելով միմյանց կապակցվող բառերի միջև եղած տրամաբանական կապերը:

Գոյական անվան ուսուցումը տարրական դասարաններում

Գոյականի ուսուցումն սկսվում է առարկա ցույց տվող բառերի տարբերակումից, որը սերտորեն կապված է գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի ուսուցմանը: Առարկայանիշ բառերը տարրական դասարաններում դասդասվում են նաև ըստ արտահայտած ընդհանուր նշանակության, ինչպես՝ *միրգ, ծաղիկ, անձ, կահույք, գործիքներ, կենդանի* և այլ ցույց տվող բառեր, որոնք ըստ արտահայտած իմաստի պատասխանում են «ի՞նչ» և «ո՞վ» հարցերին:

Աշակերտների խոսքի զարգացման տեսակետից կարևոր է հատկապես գոյականների զուգադրումը գործողություն և հատկանիշ ցույց տվող խոսքի մասերին, քանի որ կապակցված խոսքում գոյականներն ու գործողություն, հատկանիշ ցույց տվող խոսքի մասերը ունեն իմաստային սահմանափակություններ:

Այսպիսով պարզ է դառնում, որ գոյականի ուսուցումը կազմակերպվում է համեմատության և հակադրության եղանակներով, եթե առարկա ցույց վող բառերը պատասխանում են «ի՞նչ» և «ո՞վ» հարցերին, կարող են լինել մի հատ կամ մի քանի հատ, ապա հատկանիշ ցույց տվող բառերը առնչվում են դրանց և քանակային հարաբերություն չեն արտահայտում:

Գոյական անվան ուսուցման տեսակետից տարրական դասարաններում կարևորվում են անձի և իրի առումների տարբերակումները: Աշակերտները պետք է կարողանան հստակ տարբերակել դրանք՝ կատարելով համապատասխան հարցադրումներ: Այստեղ կարևոր է հիշել, որ տարրական դասարաններում ուսուցանվող բնագրերը հիմնականում գեղարվեստական ու հրաշապատում են, որոնց բնորոշ են բառերի փոխաբերական իմաստով կիրառությունները: Այս դեպքում խախտվում են իրանիշ և անձնանիշ գոյականների սահմանները, և հաճախ խոսքում իրանիշ գոյականները անձնավորվում են ու գործածվում որպես անձ ցույց տվող գոյականներ:

Գոյական անվան ուսուցման հաջորդ քայլը հասարակ և հատուկ անունների ուսուցումն է, որը հատկապես կարևորվում է գրավոր խոսքում: Դեռ այբբենարանից աշակերտները գիտեն, որ հայերենի տառերը ունեն ուղղագրության մեծատառ և փոքրատառ ձևեր: Մեծատառերը, ի տարբերություն փոքրատառերի, ունեն սահմանափակ կիրառություններ. դրանք հանդես են գալիս նախադասությունների սկզբում, և եզակի նշանակություն ունեցող անվանումներում, ինչպես նաև վերնագրերում: Երրորդ դասարանից աշակերտներին ներկայացվում են հասարակ և

հատուկ գոյականների իմաստային առանձնահատկությունները և տարբերակվում են դրանց կիրառությունները: Հատկապես հատուկ անունները բաժանվում են իմաստային խմբերի՝ անձնանուններ, տեղանուններ, վերնագրեր և այլն: Աշակերտների համար պարզ է դառնում, որ դրանք միանման առարկաներից միայն մեկին տրվող անվանումներ են, որոնք գրավոր խոսքում գրվում են մեծատառով:

Հատուկ և հասարակ անունների ուսուցման կարևոր մեթոդաբանությունից է հակադրության կիրառությունը համանունների միջոցով: Աշակերտներին են ներկայացվում մի շարք բառեր, որոնք մի դեպքում կարող են լինել հասարակ, իսկ մյուս դեպքում՝ հատոուկ անուններ: Կազմելով մի շարք նախադասություններ՝ պարզ է դառնում, որ *հասմիկ, գոռ, մանուշակ, կորյուն* և նման այլ անուններ խոսքում կարող են լինել հասարակ, եթե կիրառվում են իրենց բառային իմաստով, և կարող են լինել հատուկ անուններ, եթե խոսքում հանդես են գալիս անվանողական արժեքով: Ներկայացված գիտելիքները ամրապնդվում են հատկապես գրավոր աշխատանքների ժամերին, թելադրության կամ համր բնագրերի միջոցով տրված արտահայտությունները աշակերտները գրում են փոքրատառերով՝ համապատասխան տեղերում կիրառելով մեծատառերը:[11 , էջ 73]

Գոյականի քերականական կարգերի ուսուցման մեջ հատկապես կարևոր է գոյականի թվի քերականական կարգի ուսուցումը, որը կատարվում է հակադրության եղանակով: Թվի քերականական կարգի ուսուցումը հատկապես նպաստում է գոյական անվան տարբերակմանը, քանի որ -**եր, -ներ** վերջավորությունների միջոցով հատկապես արտահայտվում է գոյականի հոգնակի թիվը և սրա կիրառությունը նույնպես հնար է առարկա ցույց տվող բառերը տարբերակելու համար: Ներկայացվելով առարկաների քանակային տարբերությունները հատուկ վերջավորությունների միջոցով՝ աշակերտներին ենք բացատրում եզակի և հոգնակի հասկացությունների նշանակությունը և առաջադրում ենք տրված եզակի ձևերը դարձնել հոգնակի և հակառակը՝ հոգնակի ձևերը դարձնել եզակի, կատարել բնագային աշխատանք բնագրից դուրս գրել եզակի և հոգնակի թվով դրված գոյականները:

Տարրական դասարաններում աշակերտներին ընդհանուր գիտելիքներ են ուսուցանվում նաև հոլովի քերականական կարգի վերաբերյալ: Կիրառելով հարցադրման մեթոդաբանությունը

«Ծավալվող հարցադրումներ» [8, էջ 99] ժամանակակից մեթոդաբանությամբ աշակերտներին ենք բացատրում սեռական, բացառական, գործիական և ներգոյական հոլովների կազմության եղանակները համապատասխան հարցադրումներով: Ներկայացված մեթոդաբանությունն իրականացրել ենք Էրիխ Ռասպեի «Արտասովոր եղջերուն» ստեղծագործության ընթերցանության սահմաններում: [10, էջ 65]

1. Ի՞նչ հանկարծ դուրս եկավ անտառի ծառերի տակից: (Եղջերու)
2. Ինչո՞վ լցրի հրացանս: (Բալի կորիզով)
3. Ո՞ւր անհետացավ եղջերուն: (Թավ անտառում)
4. Ինչի՞ պատմությունն էր մոռացել հեղինակը: (Կորիզի)
5. Որտեղի՞ց դուրս եկավ հրաշալի եղջերուն: (Անտառի խորքից) և այլն:

Այսպիսով պարզ է դառնում, որ գոյականները բացի թվի քերականական իմաստ արտահայտող վերջավորություններից կարող են ստանալ նաև այլ վերջավորություններ:
Գոյական անվան շուրջ տարվող մարզողական, վերլուծական ու կիրառական վարժությունները պետք է նպաստեն այդ խոսքի մասի ու նրա քերականական հատկանիշների վերաբերյալ հասկացության ճիշտ ձևավորմանը և սովորած գիտելիքները խոսքի մեջ գործնականորեն կիրառելու կարողության մշակմանը:[12, էջ 366]
Աշակերտների գիտելիքները առաջարկվում է ստուգել խմբային եղանակով. «ժամանակի պահանջ է խմբային աշխատանքի՝ որպես համագործակցային մեթոդի օգտագործումը, ինչը ուսուցումը դարձնում է առավել հետաքրքիր ու աշխույժ»:[13, էջ 6] Գոյական անվան ուսուցումը զուգադրելով ուղղագրության ուսուցմանը՝ կազմում ենք ուղղագրական քարտեր և առաջարկում տրված նկարները անվանել, դրանք դարձնել հոգնակի և կատարել համապատասխան հարցադրումներով փոփոխություններ: Այսպիսով աշակերտների համար բացահայտվում են հոգնակի թվի և հոլովական վերջավորությունների մի շարք ուղղագրական դրույթներ:

Գոյական անվան ուսուցման արդյունքում աշակերտները պետք է ունենան հետևյալ վերջնարդյունքները.

1. գոյական անուն քերականական հասկացության ըմբռնում,
2. հարցերի օգնությամբ գոյական անունները տարբերակելու կարողություն,
3. հատուկ անունները մեծատառով գրելու կարողություն և դրանց իմաստային տարբերակում,

4. հարցերի միջոցով գոյականների թիվը որոշելու և այն փոփոխելու կարողություն,
5. բառապաշարի հարստացում հատկապես հոմանիշների միջոցով,
6. բառերը վերլուծելու, համեմատելու և համակարգելու կարողություններ,
7. խոսքում գոյականը՝ ըստ հոլովական նշանակության և համապատասխան վերջավորության ճիշտ գործածելու կարողության ձևավորում: [2, էջ 230]

Գոյական անվան ուսուցումը առաջարկվում է կազմակերպել ԽԻԿ համակարգով, որտեղ **խթանման** փուլում աշակերտները հիշում են առարկա ցույց տվող բառերը և դրանց ուղղագրության մասին ընդհանրական գիտելիքները: **Իմաստավորման** փուլում զուգակցվում են գոյականի թվի հատուկ և հասարակ անունների կիրառության առանձնահատկությունները, ինչպես նաև գոյականների հոլովական վերջավորությունների կիրառությունները: **Կշռադատման** փուլում գոյականները ճիշտ ձևափոխություններով աշակերտները կիրառում են խոսքում, կարողանում են համապատասխան հոմանիշային փոփոխություններով արտահայտել նույն մտքերը տարբեր բառապաշարներով՝ ներկայացնելով դրանց ոճական տարբերությունները:

Բայի ուսուցումը տարրական դասարաններում

Բայ խոսքի մասի ուսուցումն սկզբնավորվում է գործողություն ցույց տվող բառերի տարբերակումից: Ա. Տեր-Գրիգորյանը առաջարկում է թե՛ դասագրքերում, թե՛ մեթոդիկայում պահպանել խոսքի մասերն առանձին-առանձին անցնելու սկզբունքը՝ լայնորեն կիրառելով ծանոթ խոսքի մասերի միջև եղած համեմատությունները, հակադրությունները և այլն: [12, էջ 337]

Բայի ուսուցումն սկսվում է զրույցի մեթոդով, որի արդյունքում պարզ է դառնում, թե ինչ գիտեն աշակերտները գործողություն ցույց տվող բառերի մասին: Կատարելով տարաբնույթ հարցադրումներ՝ աշակերտներին հանձնարարվում է նախադասություններից դուրս գրել գործողություն ցույց տվող բառերը: Այստեղ պետք է ուշադիր լինել և նախադասությունները հիմնականում կազմել դիմավոր բայերով և հիմնական ժամանակաձևերով, քանի որ անդեմ բայի գործողություն ցույց տալու հանգամանքը դժվար ըմբռնելի է տարրական դասարանի աշակերտների համար, քանի որ բայ խոսքի մասի ուսուցումը հիմնականում կարտարվում է ժամանակի քերականական կարգի զուգադրմամբ, իսկ ինչպես գիտենք, անդեմ բայերը զուրկ են ժամանակի քերականական կարգից:

Բայ խոսքի մասի տարբերակման հիմքում նույնպես դնելով հարցադրումը՝ աշակերտների համար պարզ է դառնում, որ բայերի հարցադրումները հիմնականում առնչվում են առարկա ցույց տվող բառերին՝ ցույց տալով այն գործողությունը, որ կատարում են առարկաները: Հիմնականում անդրադառնալով դիմավոր բայերին՝ որպես քերականական կարգ՝ տարրական դասարաններում առանձնացվում են դեմքի և թվի քերականական կարգերը, որոնք նպատակահարմար է կիրառել անձնական դերանունների ուսուցմանը զուգահեռ, քանի որ առաջին դեմքով արտահայտված բայերի ենթակա են դառնում **ես, մենք** բառերը, երկրորդ դեմքով արտահայտված դիմավոր բայերին են կապակցվում **դու, դուք** անձնական դերանունները: Եվ միայն երրորդ դեմքով արտահայտված բայերի ենթակա կարող են դառնալ ամենատարբեր գոյականներ ու բայեր՝ իհարկե հանդես բերելով իմաստային սահմանափակումներ:

Բացահայտելով խոսողի, խոսակցի հարաբերությունը խոսքում՝ անդրադառնում ենք նաև գործողություն ցույց տվող բառերի թվի քերականական կարգին, որն իրականում ցույց է տալիս գործողություն կատարողների քանակը:

Դիմաթվային հարաբերության բացահայտումից հետո աշակերտների ուշադրությունը հրավիրում ենք գործողության կատարման ժամանակին՝ կիրառելով զուգադրության հնարը: Ներկա ժամանակի գործողության կատարման համար առաջարկում ենք կիրառել **հիմա**, անցյալ ժամանակի գործողության կատարման համար **երեկ**, իսկ ապառնի ժամանակի գործողության կատարման համար **վաղը** ժամանակի մակբայները: Այսպիսով նախնական տեղեկություններ են հաղորդվում նաև ժամանակի մակբակների մասին, որոնք բառեր են, որ արտահայտում են գործողության կատարման ժամանակը:

Ի տարբերություն գոյականի քերականական կարգերի ուսուցման՝ բայի քերականական կարգերը ներկայացվում են եռանդամ հակադրությամբ, ինչպես՝ բայն ունի երեք դեմք և երեք ժամանակ: Ներկայացված քերականական կարգերը ուսուցանվում են աղյուսակավորման մեթոդով. աշակերտները բնագրից դուրս են գրում բայերը և դնում համապատասխան վանդակում, կամ տրված են են լինում բայաձևեր, նրանք լրացնում են աղյուսակի մյուս վանդակները և այլն:

«Բայ» հասկացության ամրապնդման և նրա ճանաչման, տարբերակման ու արժեքավորման հիմքում քերականական հատկանիշները դնելու համար առանձնապես օգտակար է համարել գոյականի և բայի, ածականի խառը կամ համատեղ վարժությունները, որոնց մեջ առանձնանում են փոխակերպման վերաբերյալ առաջադրանքները: Աշակերտներին տրվում են արմատներ և առաջարկվում է դրանցից կազմել համապատասխան խոսքի մասերը, կամ տրվում են ածականներ, առաջարկվում է կազմել բայեր, գոյականներ ու այսպես շարունակ:

Բայի մասին գիտելիքների ուսուցման վերջնարդյունքներն են.

- ձևավորել նախնական պատկերացում բայ խոսքի մասի վերաբերյալ՝ իբրև առարկայի գործողություն ցույց տվող բառ,
- մշակել հարցերի միջոցով գործողություն ցույց տվող բառերի իմաստային արժեքը դիտարկելու ունակություն,
- զարգացնել գրավոր և բանավոր խոսքում բայերը ճիշտ և գիտակցված կիրառելու աշակերտների կարողությունը,
- մշակել օժանդակ բայերը և առհասարակ բայերը ճիշտ արտասանելու և գրելու ունակություն:

Բայի ուսուցման **խթանման** փուլն սկսվում է գրաճանաչության փուլից, երբ աշակերտները կարողանում են նկարներին նայելով արտահայտել, թե ինչ գործողություններ են կատարում նկարներում պատկերված առարկաները: Այս փուլում իմաստավորվում են գործողություն ցույց տվող բառերը, որոնք իմաստային կապերով կապակցվում են գոյականներին՝ բնորոշելով դրանց կատարած գործողությունները; **Իմասատավորման** փուլում ներկայացվում են բայի քերականական կարգերը՝ հարցադրումների միջոցով: **Կիրառման** ժամանակ աշակերտները ներկայացնում են մի շարք հոմանիշներ ու հականիշներ և դրանք կիրառում են նախադասությունների մեջ՝ ներկայացնելով դրանց կիրառական և իմասատային տարբերությունները:

Բայի ուսուցման ժամանակ կարևոր է նաև ուղղագրության հետ զուգադրումը, քանի որ տարրական դասարանից աշակերտները սովորում են **եմ** բայի ուղղագրության հիմունքները, որն ունի անկանոն գրության եղանակ: Այսպես՝ կրկնելով **է, ե** տառերի ուղղագրության հիմունքները՝ որպես բացառություն են ներկայացվում **եմ** բայի ձևերը, որոնք ներկա ժամանակ արտահայտելիս գրվում են **ե** տառով, իսկ անցյալ ժամանակ արտահայտելիս գրվում են **է** տառով: Ներկայացված անկանոնության մեջ անկանոն է նաև **է** բայի գրությունը, որը ամրապնդվում է գրավոր աշխատանքների ժամանակ:[1 ,էջ 90]

Ածականի ուսուցումը տարրական դասարաններում

Ածականները առարկայի հատկանիշ ցույց տվող բառեր են, որոնց տարբերակման կարևոր հանգամանքը առարկա ցույց տվող բառերի հետ զուգադրումն է: Ինչպես՝ ածականները պատասխանում են *ինչպիսի՞* հարցին, որ կապակցվում է *ի՞նչ, ո՞վ* հարցերին պատասխանող բառերին՝ գոյականներին:

Ա. Տեր-Գրիգորյանը ածականի ուսուցման համար առաջարկում է ուսուցումն սկսել զրույցի ձևով. հարց ու պատասխանի միջոցով որոշակի համակարգի բերել աշակերտների իմացածը ու այն հիմք դարձնել հետագա աշխատանքի համար: [12, էջ 375]Արդյունքում պարզ է դառնում, որ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի խումբը կոչվում է ածական, որ պատասխանում է *ինչպիսի՞*, *ո՞ր* հարցերին:

Ածականի վերաբերյալ քերականական վարժությունները դասագրքերում ունենում են հետևյալ բովանդակությունները.

1. Տեքստում գտնել և դուրս գրել տրված գոյականներին համապատասխան ածականները:

2. Տեքստից դուրս գրել տրված ածականների հոմանիշները: Դուրս գրել ածականները, յուրաքանչյուրի կողքին գրել, թե կազմությամբ ինչպիսի բառեր են դրանք:

3. Նախադասություններից դուրս գրել 3 «գոյական + ածական» բառակապակցություններ:[3 էջ 108-109]

Ինչպես գործողություն ցույց տվող բառերը՝ բայերը, այնպես էլ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը՝ ածականները, խոսքում ունեն որոշակի իմաստային սահմանափակումներ, որոնց ուսուցումն ունի աշակերտի խոսքի զարգացման նպատակ: Այսպիսով գրատախտակին կամ առանձին թղթերի վրա առաջադրվում են մի խումբ ածականներ, որոնք կապակցվում են տրված գոյականներից միայն մեկին կամ մի քանիսին: Աշխատանքի արդյունքում աշակերտները մի դեպքում գտնում են այն առարկան, որը կարող է այդ հատկանիշն ունենալ, իսկ մյուս դեպքում առարկաների մեջ են տեսնում նրա հատկանիշները. «առարկան ու իր հատկանիշը կամ կամ հատկանիշն ու այն կրող առարկան միմյանց հետ կապելու այդ վարժությունը հնարավորություն է տալիս գիտակցելու, որ հատկանիշը առարկայից դուրս գոյություն չունի, որ առարկան ու իր հատկանիշը անբաժան են, և դրա համար էլ նախադասության մեջ ածականը միշտ գոյականի հետ է»:[12 , էջ 375]

Ածականները, լրացնելով նույն գոյականի տարբեր քերականական ձևերի հետ, աշակերտներին պարզ է դառնում, որ դրանք գործածվում են առանց վերջավորությունների: Օրինակ՝ *քացը միրգ, քաղցը մրգի, քաղցը մրգեր, քաղցը մրգերից* և այլն:

Ինչպես մյուս խոսքի մասերի ուսուցման ժամանակ, այնպես էլ այս դեպքում պետք է կարևորել բառակազմական աշխատանքները: Ածանցման և բառաբարդման արդյունքում կատարվում է խոսքիմասային փոխանցում, որոնք ներկայացվում են զուգադրության եղանակով:

Ածականների խոսքային նշանակությունը բացահայտելու համար Ջ. Գյուլամիրյանը առաջարկում է աշակերտներին խոսք ներկայացնել առանց ածականների, այնուհետև այդ խոսքը լրացնել ածականների միջոցով՝ բացահայտելով ածականների դերն ու նշանակությունը մարդու զգացմունքներն ու մտքերը արտահայտելու ժամանակ:[2,էջ 245]

Ածականների ուսուցման ժամանակ իբրև կարևոր հանգամանք ներկայացվում նաև ստեղծագործական շարադրության գրառումը, որը, ինչպես մեր փորձն է ցույց տալիս, հատկապես հաջորդված է լինում էքսկուրսիաներից կամ նկարների դիտումից հետո: Այսպես երրորդ դասարանում ներկայացվող շարադրության պահանջներն են.

1. շարադրության թեմայի հաղորդում,
2. նկարների դիտում և բացահայտում **հատկանիշ ցույց տվող բառերի** միջոցով,
3. նկարների վերնագրում,
4. բառապաշարի հարստացում՝ **բառերի ուղիղ և փոխաբերական իմաստներով** կիրառություն,
5. շարադրում:[4, էջ213]

Ածականների ուսուցման ժամանակ մենք կարևորում ենք նաև բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցումը, քանի որ ածականների բառապաշարը հնարավություն է տալիս աշակերտներին ներկայացնել բազմաթիվ հոմանիշներ ու հականիշներ, որ խոսքը դարձնում են ավելի գրավիչ ու բովանդակալից:

Թվականի ուսուցումը տարրական դասարաններում

Թվականների ուսուցումը Ջ. Գյուլամիրյանը ներկայացնում է իբրև նորություն տարրական դասարաններում՝ այն զուգադրելով դերանունների, շաղկապների և ձայնարկությունների ուսուցմանը:[2, էջ246] Սակայն պետք է նկատել, որ թվականների ուսուցումը կատարվում է դեռևս նախաայբբենական շրջանում՝ մաթեմատիկայի դասի շրջանակներում: Մայրենիի դասերին թվականը որպես խոսք մաս ուսուցանելիս ժամանակակից ինտեգրված ուսուցումը առաջարկում է այն ներկայացնել միջառարկայական կապերի բացահայտման եղանակով:[9,էջ 339] Քննելով բառակապակցության միավորների իմաստաբանական կապակցելիության հնարավորությունները՝ ինտեգրված ուսուցումը առաջարկում է «Այբբենարան» և «Մաթեմատիկա» դասագրքերը, համադրման եղանակով ուսուցանել տարրական դասարաններում, որպեսզի հոգեբանական բարդույթավորումներ չառաջանան մի առարկայից մյուսն անցնելիս: Ինտեգրատիվ ուսումնական ծրագրերում չկա գիտելիքի արհեստական բաժանում առանձին առարկաների մեջ, և մայրենիի ու մաթեմատիկայի դասերի համադրման արդյունքում աշակերտներն իրենք են հիմնական նմանություններ գտնողները, որի հիման վրա էլ կառուցողական կրթության հիմունքներով դասավանդող ուսուցիչը կազմակերպում է աշակերտակենտրոն դաս, որի ընթացքում նոր դպրոց եկած աշակերտները բացահայտում են իրենց համար կարևոր տեղեկատվություններ և դպրոցում սովորած իրողություններն սկսում են համադրել առօրեական իրողություններին՝ պատասխանելով «Ո՞րն է ամենից կարևոր», «Ի՞նչ պետք է իմանալ» հարցադրումներին: Ուսուցչի և աշակերտների հետ ավանդական ձևերով աշխատելուն զուգընթաց՝ աշակերտները սովորում են ուսումնական բազմաթիվ վարժությունների շրջանակներում աշխատել թե՛ փոքր խմբերով, թե՛ ինքնուրույն:[5, էջ55]

Արաբական թվանշանները «Այբբենարանում» սկսում են կիրառվել ***Է*** տառի դասի շրջանակներում: Աշակերտները, արդեն ծանոթ լինելով թվականներին, կարողանում են համապատասխան թվականներ ունեցող նկարներին տրվող անունները տեղադրել համապատասխան վանդակներում: Մաթեմատիկական գումարման գործողությունը նպաստում է ***ե, ռ, և*** տառերի ուսուցմանը, այսպես ***յ*** + ***է*** = ***ե, վ*** + ***օ*** = ***ռ, յ*** + ***է*** + ***վ*** = ***և***: Բառամիջում ***և*** բառասկզբում ունեցած հնչյունային տարբերությունների ուղղագրության ուսուցումը զուգորդվում է մեկ և երկու թվական բառերի հնչյունագրումով: ***Երեք*** բառը ներկայացվում է որպես այս երկու կանոնների

համադրում: Աստիճանաբար ուսուցանվում են գրերը՝ հնարավորության դեպքում համադրվելով թվականներին, ինչպես՝ *4* թվականի գրությանը աշակերտները ծանոթանում են *չ* տառի ուսուցման շրջանակներում: *Բ* տառի շրջանակներում կիրառում են *7* թվականը, որը խորհրդանշում է շաբաթվա օրերի քանակը: *Փ* տառի շրջանակներում աշակերտները սովորում են ***մատնց*** բառի հանելուկը՝ «Մի փոսի վրա հարյուր փոս»: Այստեղ զուգահեռաբար պետք է բացատրել ***հարյուր*** բառի ուղիղ՝ մաթեմատիկական և գեղարվեստական-փոխաբերական նշանակությունները: Յուրացնելով թվականական և գրային համակարգերը՝ աշակերտները հասկանում են, որ թվանշանները թվականների գրային նշաններն են, իսկ տառերը՝ հնչյունների: Նշանային համակարգերը ամենուր են, օրինակ՝ մաթեմատիկայում առանձին նշաններով են արտահայտվում ինչպես գումարման, հանման, հավասարման, մեծի, փոքրի և այլ նշանները, այնպես էլ պատկեր-նշաններով են արտահայտվում երկրաչափական մարմինները:[9,էջ341]

Թվականը՝ որպես խոսքի մաս ուսուցանվում է չորրորդ դասարանում:

Ա. Տեր-Գրիգորյանը առաջարկում է թվականների ուսուցումը կազմակերպել ինդուկտիվ եղանակով՝ լեզվական որոշակի փաստերից դեպի դրանց ճանաչումը, գնահատումը և ընդհանրացումը կատարելով:[12, էջ377]

Թվականների ուսուցման ժամանակ կարևոր է նաև հարցադրումը: Բնագրային վերլուծությունների արդյունքում պարզ է դառնում, որ թվականները պատասխանում են *քանի՞*, *որքա՞ն* հարցերին և ցույց են տալիս առարկայի քանակ: Ինչպես առարկայի հատկանիշ ցույց տվող ածականները, այնպես էլ թվականները առարկայից դուրս գոյություն չունեն, և դրանք նույնպես կապակցվում են գոյականներին: Այս դեպքում նույնպես ի հայտ են գալիս սահմանափակումներ, քանի որ կան գոյականներ, որոնք թվական լրացումներ չեն առնում, ինչպես՝ *կաթ, ջուր, մաթեմատիկա, երազ, ուրախություն* և այլն:

Տարրական դասարաններում աշակերտներին են ներկայացվում թվականների երկու տեսակները քանակական և դասական: Հատկապես կարևոր է թվական բառերի ուղղագրության հիմունքների ուսուցումը, որի համար մասնագիտական գրականության մեջ առաջադրվում է կատարել մի շարք մարզողական վարժություններ:

Տարրական դասարաններում ուսուցանվում են թվականների գրության մի քանի ձևեր.

1. արաբական թվանշաններ - 1, 2, 3, 4, 5, 6, 100, 214, 258, 456 և այլն,

2. հռոմեական թվանշաններ – I, II, III, IV, V, VI, X, XI և այլն,
3. հայկական այբուբենի տառեր – Ա, Բ, Գ, ԺԱ, ՌԺԱ և այլն,
4. ամբողջական բառերով գրություններ - տասնմեկ, հարյուր մեկ և այլն,
5. խառը գրություն ունեցող թվանշաններ - 1-ին, 2-րդ, 100-րդ և այլն:

Հատկապես հետաքրքիր է թվականների ուսուցումը առած ասացվածքներում

Թվականների ուսուցման ժամանակ հատկապես կարևոր է դրանց բառային արտահայտությունների գրության կանոնների ներկայացումը, որը խորհուրդ է տրվում կազմակերպել միջառակայական դասերի շրջանակներում: Աշակերտները հիշելով «Մաթեմատիկա 1, 2»-ում սովորած գումարման առանձնահատկությունները՝ դրանք Մայրենիի դասի շրջանակներում փորձում են գրել ամբողջական բառերով՝ կիրառելով բարդ բառերի ուղղագրության հիմունքները: Աշակերտներին տեսանելի լինելու նպատակով պատի թերթին գրում ենք հետևյալ օրինակները, որից պարզ է դառնում, որ տասնավորները գրվում են միասին, իսկ հարյուրավորններն ու հազարավորները՝ առանձին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքում ներկայացված տեսական ու գործնական նյութը՝ եկել ենք մի շարք եզրահանգումների,մասնավորապես.

Տարրական դասարաններում խոսքի մասերի ուսուցումը առնչվում է բառակազմությանը, որի արդյունքում ստացվում են լեզվաբանական համակցված դասեր՝ բառակազմություն – ձևաբանություն, իմաստաբանություն – ձևաբանություն, կերպարվեստ – ձևաբանություն և այլ զուգահեռներով, որոնք մասնագիտական գրականության մեջ անվանվում են «Պատկերազարդ քերականություն»:

Քերականական գիտելիքների ուսուցումը կատարվում է երկու փուլով՝ նախագիտելիքների և հիմնական գիտելիքների ուսուցում: Ձևաբանական նախագիտելիքներն ուսուցանվում են առաջին և երկրորդ դասարաններում, իսկ հիմնական գիտելիքները՝ 3-4 դասարաններում:

Ելնելով հիմնական դպրոցի չափորոշիչներից և ծրագրերից՝ կարող ենք ասել, որ տարրական դասարաններում հիմնականում ուսուցանվում են գոյական, բայ, ածական, թվական խոսքի մասերը:

Կատարված աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. 1. Խոսքի մասերի ուսուցման դասերն ունեն աշակերտների բառապաշարի հարստացման նպատակ, որի համար էլ կիրառվում են բազմաբնույթ մեթոդական հնարներ:
2. Խոսքի մաասերի ուսուցումը խրախուսվում է կատարել ԽԻԿ համակարգով, որի արդյունքում աշակերտները խթանում, իմաստավորում և կշռադատում են սովորած գիտելիքները:
3. Գոյական անվան ուսուցման ժամանակ տարբերակվում են հատուկ և հասարակ, անձ և իր, եզակի և հոգնակի զուգահեռները, ինչպես նաև ներկայացվում են հոլովական մի շարք առանձնահատկություններ, որոնք նպաստում են ճիշտ խոսք կազմելու արվեստին:
4. Բայի ուսուցման ժամանակ աշակերտները սովորում են դեմքի, թվի, և ժամանակի քերականական կարգերը, որոնք պարտադիր ներկայացվում են միջլեզվական իրողությունների բացահայտման եղանակով: Այսպես բայի դեմքն ու թիվը առնչվում է

անձնական դերանունների հետ, ժամանակի քերականական կարգը բացահայտվում է ժամանակի մակբայների միջոցով և այլն:

5. Ածականները ուսուցանվում են խոսքային միջավայրերում, քանի որ խոսքում ածականները որպես կանոն լրացնում են գոյականներին:
6. Թվականի ուսուցումը կազմակերպվում է միջառարկայական համատեքստում, զուգահեռվում են «Մաթեմատիկա» և «Մայրենի» դասընթացները:

7.Խոսքի մասերի վերաբերյալ գիտելիքները տարրական դասարաններում բացահայտվում են բնագրային նյութերի ընթերցանության շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Մ., Պատկերազարդ քերականություն, 2-րդ դասարան, Երևան, 1999:
2. Գյուլամիրյան Ջ, Մայրենիի տարական ուսուցման մեթոդիկա, Երևան 2015
3. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ուսուցանվող գրավոր աշխատանքները տարրական դասարաններում, Երևան, 2012:
4. Թորոսյան, Կ., Չիբուխչյան Կ., Մուսայելյան Ս., Թեմատիկ գրավոր աշխատանքներ, Հրազդան, 2013:
5. Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004:
6. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ:
7. Հայոց լեզու, Գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագրեր (1-9-րդ դասարաններ), Երևան, 2011:
8. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա. և այլք, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004:
9. Մալխասյան Շ., Մայրենիի և մաթեմատիկայի դասավանդումը առաջին դասարանում միջառարկայական միավորման սկզբունքով, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա, Երևան, 2017:
10. Մայրենի 3, Աշխատանքային գիրք-տետր, Մաս 2,
11. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Մայրենի 3, Երևան, 2009:
12. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
13. Տիգրանյան Լ., Ուղղագրական սխալների տեսական ու դրանց շուրջ տարվող աշխատանքները, Նախաշավիղ, 1.2017: